ցումը, անշուշտ, կլինի սովետահայ բանասիրության նոր առաջընթացի արտահայտություններից մեկը: Ցանկանք նրան երկար տարիների կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

Ծննդյան 60 և գիտամանկավարժական գործունեության 35-ամյակի կապակցությամբ հոբելյարին ողջույնի ուղերձներ հանձնվեցին ՀՍՍՀ ԳԱ նախագահության և ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի, ինչպես նաև Հայաստանի գիտությունների ակադեմիայի մի շարք ինստիտուտների ու հիմնարկների, Մաշտոցի անվան Մատենադարանի, Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի և Վ. Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտների հայոց լեզվի ամբիոնների կողմից: Վ. Առաքելյանին ողջունեցին նաև ափյուռքահայ անվանի գրող և բանասեր Հ. Սիրունին, գրականագետ Գ. Ստեփանյանը, հայրենակիցների անունից՝ Եղեղովանի կոլտնտեսության նախագահ Զ. Զաքարյանը:

Վերջում շնորհակալական ջերմ խոսք ասաց հոբելյարը:

Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՒՆԳԱՐԱՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ

Հունգարահայ գաղութի պատմության հարցերը, նրա նշանավոր գործիչների կյանքն ու հասարակական-քաղաքական գործունեությունը վերջին տարիներին մեծ հետաքրքրություն են առաջացրել հունգարացի մի շարք հետազոտողների շրջանում: Դ. Կորբուլին, Բ. Բուզվին և այլ ուսումնասիրողներ իրենց անխոնջ պրպտումներով ի մի են ամփոփել հունգարահայ գաղութի ու պատմության շուրջն իրենց կատարած գիտապատմական պրպտումները և պատրաստել մի շարք հոդվածներ, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում: Նրանք մասնավորապես ուսումնասիրել են հունգարահայ գաղութի սկզբնավորման հետ կապված հարցերը (տե՛ս «Լրաբեր», 1970, № 7, էջ 97—99), գիտական շրջանառության մեջ են դրել հունգարերեն հրատարակված ու հայ գիտնականներին անհայտ մնացած առանձին հրատարակություններ (տե՛ս «Լրաբեր», 1970, № 9, էջ 95—99), հունգարահայ բժիշկների գործունեությունն ու նրանց դերը բժշկության պատմության մեջ քննման (տե՛ս «Լրաբեր», 1970, № 10, էջ 94—102), ինչպես և առանձին լրագրային հոդվածներ են նվիրել հայտնի մանկավարժ, «Արմենիա» պարբերականի խմբագիր Քրիստափոր Սոնկոթին և այլն:

Դ. Կորբուլին անցած տարի «Հայ ընտանիք» պարբերականի 5—6-րդ համարներում հրատարակել է նաև մի ընդարձակ ուսումնասիրություն նվիրված այն հայ գործիչներին, որոնց անուններով փողոցներ են կոչվել Բուդապեշտում՝ մրաժամանակ համաուսակի տալով հունգարահայ այդ գործիչների ու նրանց գերդաստանների անցած ուղին (Հայկական փողոց, Ավետիքների, Պոկտանֆիի, Ցեց Հովհաննեսի, Ջիբի Գրիգորի, Դանիելի, Տոնսկի Արբատի անունները կրող փողոցներ և այլն): Նա ի մի է ամփոփել նաև գործող մի շարք հունգարահայերի մասին կենսագրական բառարաններում տրված նյութերը, առանձին հոդված է նվիրել հայկական թեմատիկայով դրոշմանիշներին՝ ներառյալ մինչև մեր օրերը:

Հունգարահայությանը նվիրված իրենց մի շարք հոդվածներ հունգարացի գիտնականները տրամադրել են «Լրաբերի» խմբագրությանը: